Արձանագրություն

ս.թ. հունիսի 16-ին՝ ժամը 15:00-ին կայացած՝ եկամուտների վարչարարության բարեփոխումների հասարակական խորհրդի նիստի

1. Ներկայացվեցին հարկային և մաքսային բարեփոխումների 2-րդ փուլի շրջանակներում իրականացված միջոցառումները, ինչպես նաև ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից առաջարկվող՝ հարկային և մաքսային համակարգերում առաջիկայում իրականացվելիք բարեփոխումների հիմնական ուղղությունները և միջոցառումները:

Հարկային և մաքսային բարեփոխումների 2-րդ փուլի միջոցառումները ներկայացրեց ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի տեղակալ Վ.Միրումյանը:

Խորհրդի անդամները առաջարկեցին հետևյալը.

1) Հստակեցնել հսկիչ գնումների գործընթացի տեսանկարահանման մեխանիզմը և համապատասխան կարգը մշակելուց հետո այն նույնպես ներկայացնել խորհրդի քննարկմանը:

Որոշվեց, որ վերոնշյալ կարգի մշակման աշխատանքներն ավարտելուց հետո, այն կներկայացվի խորհրդի նիստում:

2) Նախատեսել ՀԴՄ-ների միջոցով հաշվարկային փաստաթղթերի դուրսգրման հնարավորություն:

Այդ կապակցությամբ նշվեց, որ դեռևս 2014 թվականից տրանսպորտային միջոցներում տեղադրված ՀԴՄ-ների միջոցով հնարավորություն է ստեղծվել էլեկտրոնային եղանակով դուրս գրել հարկային հաշիվներ: Վերոնշյալ առաջարկությունը տեխնիկապես իրագործելի է և այն հավանության արժանացավ:

2. Ներկայացվեցին Հայաստանի բանկերի միության կողմից բարձրացված հարցերը՝ հարկային մարմնի կողմից հարկ վճարողի բանկային հաշիվներին առկա

դրամական միջոցների արգելադրման և վարկային բյուրոյին հարկ վճարողների հարկային պարտավորությունների չկատարման վերաբերյալ տեղեկատվության տրամադրման հետ կապված:

Վերոնշյալ հարցերը և դրանց ուղղությամբ առաջարկությունները ներկայացրեց Հայաստանի բանկերի միության փոխնախագահ Ս.Սարգսյանը:

- Հայաստանի բանկերի միության 1-ին առաջարկությունը՝ կապված հարկային մարմնի կողմից հարկ վճարողի բանկային հաշիվներին առկա դրամական միջոցների արգելադրման դեպքում այդ հաշիվներից բանկերի նկատմամբ առկա ընթացիկ պարտավորությունների մարման հնարավորության տրամադրման վերաբերյալ, մերժվեց:

- Հայաստանի բանկերի միության 2-րդ առաջարկությունը՝ կապված ԱԿՌԱ վարկային բյուրոյին հարկ վճարողների հարկային պարտավորությունների չկատարման վերաբերյալ տեղեկատվության տրամադրման հարցի հետ, ներկա փուլում ընդունելի չէ:

3. Խորհրդի նիստի օրակարգում չներառված այլ հարցեր:

- Հայաստանի գործատուների հանրապետական միության նախագահ Գ.Մակարյանը առաջարկեց ձեռնարկատիրական գիտելիքների մակարդակի բարձրացման նպատակով անցկացնել դասընթացներ փոքր և միջին ձեռնարկատի-ության սուբյեկտների համար՝ տվյալ գործընթացում ներգրավվելով նաև Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոնին:

Առաջարկությունն ընդունվեց խորհրդի կողմից, իսկ Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոնի ներկայացուցիչը պատրաստակամություն հայտնեց ապահովել այդ գործընթացում կենտրոնի մասնակցությունը:

- Քննարկվեցին նաև ԱԱՀ-ի շեմի, հարկ վճարողների և հարկային մարմնի ներկայացուցիչների շփումներին վերաբերող այլ հարցեր: Առաջարկվեց հաջորդ նիստի օրակարգում ընդգրկել ԱԱՀ-ի շեմի օպտիմալ չափի սահմանման հարցը:

Որոշվեց խորհրդի հաջորդ նիստի օրակարգում ներառել ԱԱՀ-ի շեմի օպտիմալ չափի որոշման հարցը: